վութեան ժամանակ. զոր դաղրեցուցեր է զօրաւոր Հայ մի, Ապու'լ Ղազատ Թալայի կոչուած, եօթն կամ ութ տարի (1154-61) Նստեր է վզուրկ. բայց ինքն այլ սպա-նուեր է. սակայն յաջորդեր է իր որդին Ապու խօձայ Ռուզիկ[1]. որ՝ չգիտեմ ինչ-պէս վախճանած է։ Մաքրիզի յիշէ ասոր կամ իր հօրը շինած գեղնափոր տեղ մի՝ հանդերձ փականօք՝ վզբրկանոցին մէջ։ Սա յետին հայազգի վզուրկ եղած է՝ ի կարգի եօթանց՝ որք դար մի ժամանակի գրեթէ

1. Զսա և իր որդին՝ Զարեհ կամ Զաուիկ անուանե-լով՝ յիշած էինք ի Ն. Շնորհ. և Պարազայն իւր։ Թա-լայի՝ կրօնական հաճոյ գործ մի ըրած էր Եգիպտացոց. ասոնք դաւանութեամբ պարսկադին խալամ էին, այս-ինքն չիի. որոց, ինչպէս յայտնի է, մեծ պաշտպանք և պատուելիք են Ալի ամիրապետին նահատակ համա-բեալ որդիքն, Հասան և Հիւսէին. եաքինիս գլուխն՝ երբ և է՝ յԱկաղոն քերուած պահուէր. երբ Խաչա-կիրք եկան այս կողմեր, Շահնշահ գալով յայս քա-ղաքս՝ այդ գլուխը նորէն զմբուսել տուաւ, և վրան մա-տուռ մի շինեց. բայց Եգիպտացիք միշտ կասկածէին թէ օր մի չանարգին զայն քրիստոնեայք։ Հիմայ Թա-լայի յորդորեց զխալիֆայն, և ճարտարութեամբ վեր-ցնել տուաւ յԱկաղոնէ և բերել ի Գահիրէ (1153), ուր մզկիթ մ'այլ շինեց (Ճամի Սալիհ) և հոն կ'ուզէր դնել. բայց ժողովուրդն ստիպեց որ (Գուսպէթ էտ-Տայլամ կոչուած) հասարակաց մզկիթին մէջ դրուի. որոյ զմբէթն այլ նորոգելով կոչեցին Մաշատ Հիւսէյ-նի. որ իբր դար մի վերջը՝ (1242) հրդեհով բոլորովին այրեցաւ։